

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ՓԱՌՔԸ

ՎԵՆԵՏԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻՆ

ՏԱՐԻՈՅՍ Սեպտեմբեր ամսուն վե-
նետիկի մէջ տեղի ունեցան երաժշտական
միջազգային հանդէսներ: Եւրջ քսան
ազգեր կը մասնակցէին Նուագատօնին,
իւրաքանչիւրը 5-6 ներկայացուցիչ ա-
րուեստագէտներով:

Եւրջի իտալացի ժողովուրդի բարի
և ազնիւ նկարագրին, շատ մեծ պատիւ
ներով հիւրասիրութեան այդ արուեստա-
գէտները: Բաղադրին բոլոր թանգարաններն
ու գեղարուեստի շէնքերը (եկեղեցիներ,
պալատներ) անոնց տրամադրութեան տակ
էին: մասնաւոր թէ վենետիկի «Պենե-
տերոյ Մարչելլոյ» երաժշտանոցին վար-
չութիւնը խնամով պատրաստած էր ծրա-
գիր մը, որուն համեմատ՝ հմուտ և մաս-
նագէտ առաջնորդներու ձեռքով կը կա-
տարուէին խմբական այցելութիւններ:
միաժամանակ տեղի կ'ունենային հաւա-
քոյթներ՝ յիշեալ երաժշտանոցին մէջ: հոն
առիթմ կ'ունենային ամէնքը լսելու իտա-
լացի մեծ երաժշտագէտ — ուսուցչապետ-
ներու շատ հետաքրքրական բանախօսու-
թիւնները, գործիական թէ մեներգային
արուեստին գաղտնիքները: Կը բաւէ յիշել
պատկառելի անունները ակնառու երաժշ-
տագէտներու, ինչպէս Ildebrando Piz-
zetti, Giorgio Federico Ghedini,
Guido Guerrieri, Adriano Lualdi,
Gabriele Bianchi եւն... կը մասնակ-
ցէին բազմաթիւ համբաւաւոր երգիչ-
երգչուհիներ, երաժշտական քննադատներ,
լաւաւոր գործիքներու անուանի նուագա-
խումբեր: Տեղի ունեցան 20 համերգ-դա-
սախօսութիւններ, 28 խորհրդակցական

հանդիպումներ, 17 երաժշտական հաւա-
քոյթներ, խանդավառ մթնոլորտի մը մէջ:

Ուրախ ենք ըսելու որ միջազգային այդ
ընտրանիին մէջ պակաս չէր նաեւ հայը:
Արդարեւ Լիրանանեան Կառավարութեան
կողմէ առաքուած երեք ներկայացուցիչ-
ներէն երկուքը, որոնք միայն ֆիննիչ
Յաննախոսմբի պատուով՝ արժանացան
մասնակցելու երաժշտական ցոյցերուն, էին
Տիկ. Մարի Աւետեան՝ դաշնակահարուհի
և մեներգու, Պր. Վահէ Պէրպէրեան՝ թաւ-
ջութակահար:

Սեպտ. 26ին իրիկունը, վենետիկի ե-
րաժշտանոցին մէջ կը տրուէր վերջին հան-
դիսաւոր ցոյցը, որու կը մասնակցէին
Խոսալիա, Պելճիքա, Լիրանան, Ռուսիա,
Շուէտ, Գերմանիա և Ֆրանսա: Յայտագրի
առաջին մասին սկիզբները (թ. 3, 4, 5)
կը փայլէին մեր հայերը:

Տիկ. Մարի Աւետեան մեներգեց Բարսեղ
Կանաչեանի «Աւարդի երգը» և
«Պճինկո»ն, Տանիճէթի «Favorita»-էն
կտոր մը (O mio Fernando!):

Պր. Վահէ Պէրպէրեան Նուագեց Սուրէն
Առաքելեանի «Չարկահ»ը:

Երկուքն ալ մեծապէս յաջող անցան
և կրկին ու կրկին ծափեր խլեցին բազ-
մութենէն որ խոնուած էր դահլիճին մէջ:
Վենետիկի քաղաքապետը, իր կարգին,
Prof. Spanio, ջերմ խնդակցութիւններ
յայտնեց երկուքին ալ: Ինքզինքնին մե-
ծապէս զոհ ու երջանիկ համարեցին քա-
ղաքիս հայ գաղութի անդամները որ փու-
թացեր էին պատուելու հայ արուեստա-
գէտները:

* * *

Տիկ. Մարի Աւետեան, վկայուած Պրիւ-
քսէլի Պետական երաժշտանոցէն՝ իրրեւ
դաշնակահար, հետեւած է Հոմի երաժշ-
տանոցի երգի դասընթացներուն. երկար
ատեն է որ դաշնակի ուսուցչուհի է Պէյ-
րութի Լիրանանեան Գեղարուեստից կա-
ճառին մէջ, ինչպէս նաեւ անդամ՝ Նոյն
կաճառին վկայականի աւարտական քննու-
թիւններուն և դաշնակի զանազան մրցանք-
ներու ֆիննիչ Յաննախոսմբին: Մեներ-
գոյն է (soliste) կաճառական երգեցիկ
խումբին, և «Նայիրի» երգչախումբին
(որուն ղեկավարն է երաժշտագէտ Համ-
բարձում Պէրպէրեան), մեներգող դար-
ձեալ Լիրանանեան ձայնասփիւռի կայա-
նէն: Երջած է այդ յիշեալ երգչախում-
բերուն հետ մերձաւոր Արեւելի գլխաւոր
կեղրոնները:

Սրտագին կը մաղթենք որ ազնիւ ե-
րաժշտագէտ Տիկինը, որ և հայ ու եւրո-
պական մշակութային բարձր զարգացումի
տէր է, միշտ և ամէնուր հայ երգի տա-
րածման և պայծառացման իր առաքելու-
թիւնը յաղթանակներով պսակէ:

* * *

Պր. Վահէ Պէրպէրեան երկրորդ որդին
է երժշտ. Համբարձում Պէրպէրեանի,
թաւջութակի մէջ վկայուած Պէյրութի
Լիրանանեան գեղարուեստից կաճառէն:
աշակերտած է ռուս համբաւաւոր թաւջու-
թահար Նիքոլա Տալի (Dale): Կը Նուագէ
Պէյրութի նուագախումբերուն մէջ, ինչպէս
նաեւ Լիրանանի ձայնասփիւռի կայանէն
կու տայ համերգներ իրրեւ մենանուագ
(soliste): Այս տարուան վենետիկի երա-
ժշտական ցոյցերուն մասնակցեցաւ զա-
նազան նուագախումբերու մէջ, ըլլայ
Fenice թատրոնին մէջ, ըլլայ նաեւ ե-
րաժշտանոցին մէջ: Պարձանքով կ'արձա-
նագրենք որ Պր. Վահէ Պէրպէրեան՝ երա-
ժշտանոցին մէջ տեղի ունեցած ժողովնե-
րու ընթացքին՝ նախագահ ընտրուած է

հանդէսներու կազմակերպիչ ու կարգադիր
մարմին, ինչ որ մեծագոյն գնահատանքն
է իտալացի երաժշտագէտներու կողմէ՝
հանդէպ իր տաղանդին:

Ուրախութեամբ կ'արձանագրենք նաեւ
որ Պր. Վահէ Պէրպէրեան անդամ է Միւ-
թարեան մեծ ընտանիքին. երկար տարի-
ներ ան աշակերտած է Միւթարեան Վար-
ժարաններու մէջ, Հալէպ և Պէյրութ.
այս պարագան մեզի համար կրկնակի
ուրախացուցիչ է և հմայիչ:

Մեր խոր հիացումին հետ՝ ջերմ մաղ-
թանքներ ունինք այս հայ երիտասարդ
արուեստագէտին, ապագայ նորանոր յա-
ջողութիւններու յոյսերով:

* * *

Ազնիւ մտածութեամբ մը Պր. Վահէ
Պէրպէրեան համերգ մըն ալ սարքեց Մու-
րատ Ռափայէլեանի դահլիճին մէջ, Հոկտ.
18-ին: Հանդէսին կը նախագահէր Ռափա-
Գիւրգ. Արրահայրը, շուրջն ունենալով
վանքի և վարժարանի Հայերը, աշակերտ-
ները, և վենետիկի հայ գաղութը:

Պր. Վահէ Պէրպէրեան յաջողութեամբ
ներկայացուց հետեւեալ յայտագիրը. Da-
niel van Goëns - Scherzo, David
Popper - Tarantelle, Գրիգոր Սիւնի -
Սարերի հովիւ մեռնել, Կոմիտաս Վրդ. -
Կուրակ, Աղբըս. Յարութիւնեան - Im-
promptu, Սուրէն Առաքելեան - Չարկահ
(Պարսկ. Ռափսոտի):

Իւրաքանչիւր կտորէ առաջ տուաւ հա-
կիրճ տեղեկութիւններ նկատմամբ հե-
ղինակին, և վերլուծումներ՝ նկատմամբ
երաժշտական յորինումներին:

Բոլոր ծափերով կրկնակի գնահատուե-
ցաւ մեր հայ արուեստագէտը:

Դաշնակով ընկերացաւ շատ յաջող կեր-
պով Օր. Ակի Միլտոնեան:

Երկուքին ալ կը յայտնենք մեր ջերմ
շնորհակալութիւնները, փայլուն յաջողու-
թիւններու անկեղծ մաղթանքներով:

Թ.Վ.Ա.ԿիՅ

